

Խորոնիկա

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴՈՒՄ

Հայկական ՍՍՌ ժողովրդական տնտեսության խորհուրդը որոշել է կազմակերպել հետևյալ նոր գործարանները.

I. Էլեկտրատեխնիկական արդյունաբերության և սարքաշինության վարչության գծով

1. Միկրոէլեկտրաշարժիչների գործարան Գո-րիս քաղաքում:

2. Նրկարատե նվազող գրամաֆոնային թի-թեղների համար կորունդի ասեղների փորձնական արտադրություն՝ Արզնու ճշգրիտ քարերի գործարանում: Արտադրանքի ծավալը 1959 թ. նախատեսվում է 2 մլն., 1960 թ.՝ 5 մլն. և 1961 թ. սկսած՝ 10-ական մլն. հատ:

II. Մեքենաշինության և հաստացաշինության վարչության գծով

1. Ախտայի շրջանի Բժնի գյուղի մեքենատրակտորային կայանի բազայի վրա՝ գյուղատնտեսական ինվենտարի, գործիքների արտադրության և տրակտորների ու այլ գյուղատնտեսական մեքենաների առավել մշակող դետալների վերականգնման գործադրանք:

2. Նրեանի ավտոպահեստամասերի գործարանում ավտոմոբիլների պահեստի մասերի ու ագրեզատների արտադրության ընդլայնում, ապահովելով արտադրանքի թողարկումը հետևյալ ծավալով. 1959 թ.՝ 60 մլն. ուրբ., 1960 թ.՝ 75 մլն. ուրբ., 1961 թ.՝ 90 մլն. ուրբ., 1962 թ.՝ 105 մլն. ուրբ., 1963 թ.՝ 120 մլն. ուրբ., 1964 թ.՝ 135 մլն. ուրբ. և 1965 թ.՝ 150 մլն. ուրբ.:

Արդյունաբերության առաջավորների պարգևատրումը

Շինանյութերի արտադրության գործում ձեռք բերած հաջողությունների և արտադրական բարձր

ցուցանիշների համար Շինանյութերի արդյունաբերության վարչության 29 աշխատողներ պարգևատրվել են Հայկական ՍՍՌ ժողտնտխորհի և ՀԱՄԽ-ի պատվոգրերով:

Ժողտնտխորհը և Հայաստանի Արհեստակցական Միությունների խորհրդի նախագահությունը որոշում են ընդունել՝ ս.թ. սեպտեմբերի 1-ից 7-ժամյա աշխատանքային օրվա փոխադրել հիդրոէլեկտրակայանների Ստորին Հրազդանի կասկադի աշխատողների կուկելտիվին:

Կրճատ աշխատանքային օրվա անցնելը իրագործվում է աշխատողների թվի և աշխատավարձի ֆոնդի սահմաններում, պահպանելով գոյություն ունեցող ամսական պաշտոնեական ուժիկները, տարիֆային օրական դրույքները, արտադրանքի նորմաները և պարգևատրման սխեման: Ժողտնտխորհի էներգետիկ վարչությանը հանձնարարված է հիդրոէլեկտրակայանների Ստորին Հրազդանի կասկադի ցեխերում և արտադրական տեղամասերում ջանադիր աշխատանք կատարել կասկադի անվթար ու տնտեսողական աշխատանքն ապահովելու և արտադրական բոլոր ցուցանիշները կատարելու համար:

Ռեսպուբլիկայի ժողտնտխորհը քննարկել է արտադրական պրոցեսների մեքենայացման ու ավտոմատացման և նոր տեխնիկայի արմատավորման գծով կարևորագույն միջոցառումների կատարման արդյունքները: Պլանով նախատեսված 156 կարևորագույն միջոցառումներից անցած 6 ամսում (մինչև հուլիսի 1-ը) լիովին կատարվել է 97, մասամբ՝ 23 և չի իրացվել 36 միջոցառում: Բացի այդ, պլանային առաջադրանք-

րից դուրս, լրացուցիչ կերպով ներդրվել է 23 միջոցառում:

Ստուգումը ցույց է տվել, որ, մյուս ճյուղային վարչությունների համեմատությամբ, նոր տեխնիկայի արմատավորման ուղղությամբ մեծ աշխատանք են կատարել էներգետիկ վարչության օբյեկտները և էլեկտրատեխնիկական արդյունաբերության ու սարքաշինության, ինչպես նաև ֆիմիական, Սննդի, Մսի և կաթի արդյունաբերության վարչությունների ձեռնարկությունները:

Գյուղուշի հիդրոէլեկտրակայանի կոլեկտիվի ուժեղով առաջին անգամ արմատավորվել է ռեակտիվ կարողությունների խմբային կարգավորում: Ինժեներա-տեխնիկական աշխատողները մշակել և պատրաստել են հիդրոտուրբինների կալիտացիոն ռեֆմների հետադոտությունների ապարատուրայի փորձնական նմուշը:

Ուշադրության արժանի է Հայէլեկտրագործարանի և նրա ֆիլիալ գիտա-հետադոտական ինստիտուտի նորարարների փորձը, որոնք մշակել են տեխնիկական դոկումենտացիա ու պատրաստել կիսահաղորդիչային համուղղիչներ ունեցող սինխրոն զենեռատորների սերիայի երկու տիպաչափերի նմուշները: Կաբելի գործարանում յուրացվել է վինիլիեքսային մեկուսացում ունեցող էմալապատ հաղորդալարերի թողարկումը: Բամբակեղենի շրջահյուսվածք ունեցող հին տեսակի հաղորդալարերի փոխարեն այստեղ թողարկվել է նաև չայրվող թաղանթով հաղորդալարերի փորձնական պարտիա:

Արտադրական պրոցեսների մեքենայացման ու ավտոմատացման գծով շատ արժեքավոր միջոցառումներ են իրագործել Ս. Մ. Կիրովի անվան և «Պոլիվինիլացետատ» գործարանները, որտեղ արմատավորվել է քլորբենզոլի ռեկտիֆիկացման կոմպլեքսային ավտոմատացումը և յուրացվել պոլիվինիլբուտիրալային թաղանթի արդյունաբերական արտադրությունը: Երևանի յուղսառնարանի, պահածոների և Շահումյանի լիմոնադի գործարանների կոլեկտիվները հաջողությամբ իրագործել են հոսքային գծեր, մեքենայացրել ու ավտոմատացրել նախկինում ձեռքով կատարվող պրոցեսները:

Դրա հետ միասին մի շարք վարչություններ չեն ապահովում նոր տեխնիկայի գծով նախատեսված միջոցառումների կատարումը: Նոր տեխ-

նիկայի պլանները հատկապես վատ են իրացնում Թեթև արդյունաբերության, Փայտամշակման և անտառային արդյունաբերության, Մեքենաշինության և հաստոցաշինության, Շինանյութերի արդյունաբերության, Գունավոր մետալուրգիայի և լեռնահանքային արդյունաբերության վարչությունները:

Նոր տեխնիկայի գծով կարևորագույն միջոցառումների պլանի կատարումն արագացնելու և ապահովելու նպատակով Ժողտնտխորհրդ պարտավորեցրել է ճյուղային վարչություններին՝ ձեռնարկելու դրանց իրացման միջոցները:

Ժողտնտխորհրդ պարտավորեցրել է նաև նյութա-տեխնիկական մատակարարման և վաճառահանման Գլխավոր վարչությանն ու արտաքին հարաբերությունների բաժնին՝ մեկ ամսվա ընթացքում ձեռնարկություններն ապահովել անհրաժեշտ սարքավորումով և կոմպլեկտավորող շինվածքներով:

ԿԱՀՈՒՅՔԻ ՆՈՐ ՆՄՈՒՇՆԵՐԻ ՑՈՒՑԱՀԱՆՈՒՄ

Հետաքրքիր ցուցահանդես կազմակերպեց Հայաստանի Ժողտնտխորհի Փայտամշակման և անտառային արդյունաբերության վարչությունը: Ցուցահանդեսին մասնակցեցին ռեսպուբլիկայի բոլոր կահույքի ձեռնարկությունները: Ցուցահանդեսի նպատակն այն էր, որ բնակչության լայն խավերը ծանոթանան կահույքի նոր նմուշներին:

Կահույքի նմուշներից բացի, այստեղ ներկայացված էին փայտանյութի մնացուկներից՝ թեփից և տաշեղից պատրաստված ատաղձագործական սալեր: Ներկայումս Փայտամշակման և անտառային արդյունաբերության վարչության կոնստրուկտորական բյուրոն կատարում է այս փորձանյութի փորձարկումներն այն հաշվով, որ ապագայում այն օգտագործվի կահույքի արդյունաբերության մեջ:

Այցելուների ուշադրությունն էր գրավում մանկական կահույքը: Պահարանից, սեղանից և աթոռից բաղկացած կոմպլեկտը պատրաստվել է կոնստրուկտորական բյուրոյի էսքիզներով:

Սպիտակությամբ փայլող խոհանոցային պահարանը, որը դրված էր ցուցահանդեսում, արժանացավ շատ այցելուների, հատկապես կանանց հավանության: Այդ պահարանի մոդելը փոխ 1: առնված չեխոսլովակյան կահույքագործներից:

Ժամանակակից փոքր զաբարիտի կահույքը գեղեցիկ է ու պարզ: Նա հարմարեցված է փոքր տարածություններին և պորտափակ է:

Բնակչությունը այս կահույքի խոշոր ու հաճուն պահանջ ունի: Կոնստրուկտորական բյուրոն մշակել է նոր մոդելներ, որոնցից լավագույնները ուղարկվելու են Մոսկվա՝ նոր բնակարանների համար կահույք քնտրելու կոնկուրսին:

Ռեսպուբլիկայի կահույքի ֆաբրիկաները յուրացնում են կահույքի նոր նմուշների արտադրությունը: Արդեն թողարկվել են դրանց առաջին պարտիաները: Նորագույն մոդելների կահույքի մասսայական արտադրությունը նախատեսվել է սկսել 1959 թ.: Փոքր զաբարիտի կահույքը թողարկելու է Ս. Մ. Կիրովի անվան ֆաբրիկան:

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԳԻՏԱ-ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿՈՄԻՏԵՈՒՄ

Ս.թ. սեպտեմբերի 11-ին Հայկ. ՍՍՌ ՊԳՏԿ-ում տեղի ունեցավ խորհրդակցություն էլեկտրահաղորդման գծերը լարման հետևյալ բարձր աստիճանի փոխադրելու հարցի շուրջը, նրանց թողունակությունն ավելացնելու նպատակով:

Այս հարցի առթիվ հաղորդումով հանդես եկավ Հայկ. ՍՍՌ ՊԳՏԿ-ի ծանր արդյունաբերության բաժնի պետ ընկ. Գ. Բ. Դավթյանը: Կանգ առնելով էլեկտրահաղորդման գծերը լարման բարձր աստիճանի փոխադրելու գործում էներգետիկ և նախագծող կազմակերպությունների խնդիրների վրա, ղեկուցողը բերեց քննարկվող հարցի առթիվ կատարվող նախագծային մշակումների մոտավոր ցանկը:

Ժողտնտիստրհի էներգետիկ վարչության գլխավոր ինժեներ ընկ. Գ. Բ. Տեր-Ակոպովը և «Հայգրելագուղէներգույի» շահագործման բաժնի պետ ընկ. Ա. Ս. Մուկացյանը հաղորդեցին այն միջոցառումների մասին, որոնք այդ ուղղությամբ կատարում են իրենց կազմակերպությունները:

Ձեկուցումների շուրջը ծավալվեց մտքերի աշխույժ փոխանակություն, որի հետևանքով որոշում ընդունվեց ՊԳՏԿ-ին կից ստեղծել Հայաստանի բարձրավոլտ էլեկտրահաղորդման գծերի զարգացման մշտական հանձնաժողով: Հանձնաժողովի հիմնական խնդիրները համարվեցին՝ ռեսպուբլիկայի բարձրավոլտ էլեկտրահաղորդման գծերի զարգացման ուղղությունների որոշումը, նրանց նախագծման աշխատանքների կոորդինացումը, բարձրավոլտ էլեկտրահաղորդման գծերի նախագծման, շինարարության և շահագործման հայրենական ու արտասահմանյան փորձի ուսում-

նասիրման և օգտագործման կազմակերպումը, Հայկ. ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի էլեկտրատեխնիկայի լաբորատորիայի կողմից բարձրալեռնային գծերի նախագծման ու շահագործման յուրահատուկ հարցերը (մեկուսացում, «պսակ», հողակցում, խանգարումներ և այլն) ուսումնասիրելու գծով կատարվող գիտա-հետազոտական աշխատանքների հետագա ընդլայնումը:

Ս.թ. սեպտեմբերի 26-ին Հայկ. ՍՍՌ ՊԳՏԿ-ն ռեսպուբլիկայի մեքենաշինական, էլեկտրատեխնիկական և սարքաշինական արդյունաբերության ինժեներատեխնիկական աշխատողների համար կազմակերպեց տեխնիկական գիտությունների դոկտոր-պրոֆեսոր Ա. Ն. Բորոդաշևի դասախոսությունը «Տեխնոլոգիական գիտության խնդիրների և բարելավման ուղիների մասին» թեմայով:

Պրոֆ. Բորոդաշևը ներկա գտնվողներին ծանոթացրեց Համամիութենական տեխնոլոգիական վերջին կոնֆերանսների որոշումներին, որտեղ բազմակողմանիորեն քննարկվել են ավտոմատացման տեխնոլոգիական հիմունքները: Այդ կոնֆերանսները օգնեցին բացահայտելու որոշ արտադրական պրոցեսների ավտոմատացման անցնելու աշխատանքներում տեղ գտած մի շարք էական անփութությունները:

«Մեքենաշինության և սարքաշինության առաջավոր տեխնոլոգիայի համար» Համամիութենական գիտա-արտադրական կոնֆերանսը (1958 թ. հունվարի 27-31), մեծ նշանակություն տալով